ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԳՀԱՊՁԲ-5/183/3

N 11/338-2018

ք. Երևան «19» 04 2018թ.

Ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Տոպազ-95» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Բաբանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **500 000 (հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը՝ համաձայն սույն պայմանագրի հավելված N1-ի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Ամրագրումներ ստանալու դեպքում սենյակների հասանելիությունը ստուգեք նախքան ճանապարհորդությունը՝ էլ. փոստով կամ հեռախոսով։

7. ԱՆՀՈՂԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՇԽԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Ֆորս-մաժորի դեպքում կողմերից մեկի պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա անհաղթահարելի ուժի հանգամանքները անմիջականորեն ազդեցություն են թողել պարտավորությունների կատարման վրա։ Ֆորս-մաժորի ազդեցության տակ հասկացվում է ցանկացած իրադարձություն, որն ընդունվում է ազգային օրենսդրությամբ՝ որպես ֆորս-մաժոր։

7.2 Ֆորս-մաժորի դեպքում կողմերը պարտավորվում են տեղեկացնել միմյանց՝ 72 ժամվա ընթացքում գրավոր տեղեկանք ներկայացնելով։

7.3 Եթե ֆորս-մաժորը տևում է ավելի քան 30 օր, կողմերն իրավունք ունեն դադարեցնել պայմանագիրը։

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Պայմանագրի կողմերի միջև ցանկացած տարաձայնություն լուծվում է բանակցությունների միջոցով։ Եթե պրետենզիայի ստացման օրից 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չի տրվում, գործը ենթակա է դատական քննության։

8.2 Սույն պայմանագրի մասին տեղեկությունը գաղտնի է մնում երրորդ անձանց համար։

8.3 Սույն պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ հավասար իրավաբանական ուժով։

8.4 Պայմանագրում նշված հասցեներն ու հեռախոսահամարները պետք է թարմացվեն 5 աշխատանքային օրվա ընթացքում։

8.5 Պայմանագրերը կնքվում են էլեկտրոնային փոստի միջոցով։

8.6 Սույն պայմանագրի գործողությունը դադարեցվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ։

8.7 Հարցերն ինչպես նաև գանգատները ուղարկեք հասցեներ՝ info@ararat-travel.am կամ +374 (60) 312 045։

8.8 Ամառային գրասենյակի աշխատանքային ժամերը՝ հունիսից մինչև սեպտեմբեր՝ երեքշաբթի–կիրակի, 10:00–18:00։

8.9 Հեռախոսային զանգերի պատասխանատու է Լիլիթ Գրիգորյանը։

8.10 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրն է համարվում դրա ստորագրման օրը։

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԿԱ ԱԱԾ **ք.Երևան, Նալբանդյան 104** **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի** **գործառնական վարչություն** **Հ/Հ 900011301067** **ՀՎՀՀ 01507079**	**«Տոպազ-95» ՍՊԸ** **ք. Երևան, Բաղրամյան 33ա** **«Կոնվերս բանկ» ՓԲԸ** **Հ/Հ 1930001125920100** **ՀՎՀՀ 00010717**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ս. Բաբանյան**
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության
Կառավարական կապի և
տեղեկատվության վարչություն
Ելից 124/1033 «19.04.18»

Հավելված N 1
2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

11/138-2018 «19» 04

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
մասի համարը՝ գնումների գծով կազմակերպիչ հանձնաժողովի որոշմամբ հաստատված	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
11	32561600/1	օպտիկամանրաթելային փոխարկիչ	Չինաստան	Օպտիկական ազդանշանի փոխակերպիչ, մեկ թելքանի, միամոդ, SC բնիկ, 20կմ, 1 զույգ - 1 հատ Type A (RX: 1310 nm) և 1 հատ Type B (TX: 1550 nm) (Fiber optic converter SC-type dual-wavelength single-mode fiber port, 10/100Base-TX RJ-45 port, distances up to 20 km): Երաշխիքային ժամկետ առնվազն 365 օր	հատ	25 000	500 000	20	ք. Երևան, Նալբանդյան 104	10	30.04.2018թ.
										10	31.08.2018թ.

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

Ծանոթություն՝ ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից, ապրանքը ընդունում է պահեստապետը:

Ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԿԱ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Տոպազ-95» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 33ա
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ 00010717
Տնօրեն

Ս. Բաբանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 19 » 04 20 թ. կնքված
11/138-2018 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված [illegible]	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
11.	32561600/1	օպտիկամանրաթելային փոխարկիչ	0	0	0	250 000	250 000	250 000	250 000	500 000	500 000	500 000	500 000	500 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԿԱ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Տոպազ-95» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 33ա
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ 00010717

Տնօրեն

Ս. Բաբանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
20 թ. « » թվականի
ծրագրի
Վիճակագրական հավաքագրում

Հ.Տ.Հ.
ազգանուն, անուն
_____
ստորաբաժանում
_____
զբաղեցրած պաշտոն
_____

Հաստատվում եմ
_____
_____
_____

Հ.Տ.Հ.
ազգանուն, անուն
_____
ստորաբաժանում
_____
զբաղեցրած պաշտոն
_____

Հաստատվում եմ
_____
_____
_____

ՄԱՍՆԱՍԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
N ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆՈՒՆԸ

Մասնակցություն ունեցող կազմակերպությունների ցանկ

N	Մասնակցության ձևը (բաժնետոմս, վարչական դիրք, գործադիր մարմնի անդամ, գրանցված անձ, շահառու տնտեսական գործունեության մասնակից, գործընկեր, բաժնեհանձնագիր, գրանցված անձ, գրանցված անձի շահառու, գրանցված անձի գործընկեր, գրանցված անձի բաժնեհանձնագիր)	Մասնակցության գծով տարեսկզբի դրությամբ				Մասնակցության գծով ամսվա ընթացքում				Մասնակցության գծով ամսվա վերջի դրությամբ			
		Ընդհանուր արժեքը (դրամական միավորներով)	Ընդհանուր արժեքի տոկոսային հարաբերությունը կանոնադրական կապիտալում (%)	Ընդհանուր արժեքի տոկոսային հարաբերությունը գործընկերային կապիտալում (%)	Ընդհանուր արժեքի տոկոսային հարաբերությունը բաժնետոմսերի (բաժնեհանձնագրերի) ընդհանուր թողարկման մեջ (%)

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն